

Կօրէնի, Խասպաղի եւ Չախձորի նման հեռաւոր թաղերը բնակող, մենք չտեսանք անոնք: Անկասկած՝ թուրք ընտանիքներու մօտ կային բազմաթիւ հայտորդիներ, որոնցմէ փոքրիկները լուր իսկ չունէին թէ իրենք հայ են, եւ մենք ալ ի վիճակի չէինք փնտռուք եւ ստուգում կատարելու:

Ահաւոր էր իր կենսունակութենէն պարսլուած քաղաքի մը դատարկութիւնը: Մեզի համար յատկապէս, որ սարսափին մէջն էինք երէկին, եւ անընտոյլ վաղուան:

Ս. Մ. ԳՍՍՊԱՐԵԱՆ

6.— 1915ի ԴԵՊՐԵՍԻՆ ԴՐՈՒԱԳՆԵՐ

Առաջին համաշխարհային պատերազմին հայ ժողովուրդին բաղձանքը դաշնակից պետութիւններու յաղթանակն էր: Այդ իսկ պատճառով Կիւրինի առաջնորդ Խորէն Եպիսկոպոս Դիմաքսեանը, հեռատեսութիւնը ունեցաւ, Սահակ Կաթողիկոս Խապայեանի հրահանգներուն համաձայն, անմիջապէս կազմելու դաւառական ժողով մը, Կիւրինի եւ շրջանի բոլոր հայ գիւղերուն երկայացուցիչներէն բաղկացած: Երկար վէճերէ յետոյ, այդ ժողովին մէջ որոշում տրուեցաւ բացարձակապէս չեղող մնալ ու հաւատարմօրէն ծառայել թուրքիսյ կառավարութեան, տալով անոր ամէն տեսակ օգնութիւն:

Հակառակ հայերու որդեգրած այս դրական վերաբերումին, թրքական իշխանութիւնը, քիչ ժամանակ անց, մուսուլմաններ հանց ամէն կողմ, փողոցէ փողոց, որ քրիմտոնեայ աղքատնակչութիւնը, այսինքն հայերը, 48 ժամուան ընթացքին յանձնեն իրենց ունեցած ղէնքերը, անսաստողները կախաղանի պատիժին ենթարկելու բացորոշ սպառնալիքով:

Չէնքերու հաւաքումի ընթացքին, սկսան նաեւ ձերբակալութիւններն ու անոր յաջորդող տեղահանութիւնները: Միշտ նոյն կերքով մուսուլմանները կը յայտարարէին թէ այն իսլամը, որ քրիստոնեայ մը կը պահէ իր տան մէջ, նըմանապէս կախաղան պիտի հանուի: Նման խիստ հրամանով հայերը պարտաւոր էին իշխանութեան յանձնել իրենց բեռնատար անասունները: Աքսորի կարաւանէն ետ մնացողները նոյնպէս ենթակայ էին ծանր պատիժի: Կիւրինի հայ բնակչութիւնը ահ ու սարսափի տակ, լքեց իր հայրենի երգիքն ու բունց աքսորի աղիտալի ճամբան: Հայ ընտանիքներ այլեւս տէրը չէին իրենց սեփականութեան, թուրք դրացիներ կու գային ու կը տանէին ինչ որ կ'ուզէին, եւ կը վճարէին ինչ որ ուզէին: Կաթընաու կով մը, օրինակ, շատ մը տեղեր առեր էին հինգ դահեկան վճարելով միայն:

Տեղահանութենէն առաջ տրդէն հեղձուցիչ էր մթնոլորտը: Իշխանութիւնները արտօներ էին ամէն վայրագութիւն: Այն հայերը որ քաղաքական կուսակցութեան մը կը պատկանէին, սոսկալի տանջանքներու կ'ենթարկուէին, սպաննելէ առաջ: Վարդան Ճըզըլեանը (դաշնակցական) ոտքերուն պայտ դարնելէ ետք, քարերով եւ բիրերով մեղուցին: Եղթայակապ բանտարկեալներուն բացարձակապէս արգելուած էր որեւէ յարաբերութիւն դուրսիներուն հետ, անդամ, թոյլ չէր տրուէր որ դուրսէն իրենց հարազատներուն կերակուր տարուէր: Օր ցերեկով շղթայակապ հայերը, կը տարուէին շարչարանքներէ յետոյ, դէպի սպանդանոց: Ոճիրին վայրը՝ 2-3 քիլոմետր հեռու «Սազլն Պողազ»ն էր, ուր կը տանէին Կիւրինի հայերը կազմակերպուած ջարդին: Նոյնպէս հոն առաջնորդեցին մասնաւոր կառախմբով մը Կիւրինի առաջնորդ

Դիմաքսեան Եպիսկոպոսը, իր Հեռեւորդներով, որոնք էին՝ Տէր Յեսու քհնյ. Վարդապետեանը, Տէր Սահակ Քհնյ. Զէյթունցին, Տէր Ատոէ Քհնյ. Մանուկեանը, Տէր Իգնատիոս Քհնյ. Բանեանը, Պետրոս Պատուելի Պէշկէօթիւրեանը, եւ մայր եկեղեցիին ժամկոչը: Ամէն ալ կը գիտակցէին, որ պիտի սկսի կոտորածը, կը տեսնէին նախանշաններն ու շարժումները:

Յանկարծ, կը լսուի բարձրագոտ ձայն մը: Ղարաճայենց Աւետիքը՝ նըշանաւոր այդեպանը կիւրիմի, մէկ վայրկեանի մը համար ձայն կ'ուզէ դահճապետ Ծաղիր էֆէնտիէն: Թոյլ կը արուի արհամարհանքով մը: Աւետիքը կ'ըսէ. «Հիմա որոշ կը հասկնանք, որ ոչ միայն մեզի այլեւ ողջ հայ բնակչութիւնը պիտի բնաջնջէ, բայց շատ կը սխալիք. հայ ժողովուրդը տեւապէս պիտի մնայ, հողին տակէն կրկին ծնունդ պիտի առնէ, ձեզ դատապարտելու համար: Հիմա հրամեցէք, ի՛նչ որ պիտի ընէք, մենք կ'ապուած ենք»: Նոյն պահուն, Սրբազան Հայրը դեպիւնէն ափ մը հոգ առնելով կը նեւտէ բոլորոթին ոտջեւ իրբեւ վերջին հաղորդութիւն, եւ դառնալով հարիւրապետին կ'ըսէ.

— Եիմտի վագիփէմիզի իմրա էտիմ, պիզ հագըր ը'գ(1): Ներկայ գըտնուող ժամատարմաներուն վկայութեամբ եւ պատմածով, ջարդը կէս ժամէն աւելի չի տեւեր: Նախ կը կողոպտեն բոլոր գոհերը, ապա կը սկսին սպաննել: Ծատեր ողջ—ողջ նախապէս բացուած փոսերու մէջ կը լեցնեն վայրագորէն: Դահճապետը անմիջապէս Սրբազան Հօր մատանին կ'առնէ, մատը կտրելով:

Ամէն տեղ ջարդին եւ տեղահանութեան կ'ընկերանար կողոպուտը: Եկեղեցիներու, դպրոցներու եւ անձնական տուներու մէջ բան չէր մնար: Ականատեանները կը պատմեն, որ կիւրիմի Մայր եկեղեցւոյ թանկագին սկիւնը, պաշտօնական ջարդէն յետոյ, 3—4 օր անցած հաղիւ, տեսեր են զայնադամին տանը մէջ, իրբեւ անոր կնոջը դարդեղէններու աման:

**

Աքսորուած կիւրիմցիներու մեծ մասը գէտի Պերեճիլը եւ Նիզիպ ճամբուն վրայ կողոպտուելով, անօթի—ծարաւ, լեռը մնացած են. ոմանք յիշեալ վայրերը հասնելէ յետոյ, հիւանդութենէ, անօթութենէ եւ թշուառութենէ սպառելով մահացած են: Կիւրիմի մէջ մասնաւորաբար վար դըրուած է Հեքիմենց «Սեւոն», Պողոսը՝ իբր զինուորական վարպետ դերձակ: Անոր առաջարկուած է, որ եթէ կ'ուզէ մնալ, հարկ է որ խլամանայ: Ան ստիպուած կ'ընդունի եւ անունը կը դնեն Լութֆի Ուստա: Սեւոն մասնաւոր աղերսագիր մը կը ներկայացնէ, այս արարքէն ետք, դայմադամին, որ իր տեղահանուած ընտանիքը կարաւանէն վերադարձնեն խլամութիւնը ընդունիլ տալով: Գայմազամը ընդունելով եղած առաջարկը երկու ժամատարմայի կը յանձնարարէ որպէսզի անոնք մեկնած կարաւանին հասնելով 8 հողիէ բաղկացած Հեքիմեան ընտանիքը Ալպիստանի մօտերը դատարանին ներկայացնելով խլամութիւնը ընդունիլ տան եւ վերադարձնեն կիւրիմ: 2 ստիկանները հասնելով Ալպիստան, կը տեղեկանան որ կարաւանը 8 քիլոմետր հեռացած է արդէն քաղաքէն: Կը հասնին քանի մը ժամ յետոյ արքայութեանը, կը գտնեն զանոնք կը ստուգեն իրենց արուած ցուցակը անուններուն: Առաջին անգամ կը հանդիպին Հեքիմենց Ալմաստ Ապլային, որ ճերմակեղէններու տակ էր, բաւականին ծանր վիրաւորուած: Կը պատմեն եղած կարդազրութիւնները, կը

1. Այժմ ձեր պարտականութիւնը կատարեցէ՛ք, մե՛նք պատրաստ ենք:

կարգան ցուցակը, որուն վրայ կային էլմաս Հեքիմեան, Աստուր Տատուրեան, Աւետիս Պետրոսեան, Սիրանոյշ Հեքիմեան իր 4 զաւակներով:

Հարսը՝ Սիրանոյշ խիստ կը հակառակի կրօնափոխ ըլլալ, իսլամութիւնը ես չեմ ընդունիր ըսելով: Կեսուրը այդ իրիկուն ամբողջ գիշերը կը խրատէ դայն, որ ի սէր իր չորս պղտիկ ձագուկներուն, երեսանց գոնէ ընդունի: Հարսը կը համակերպի: Առաւօտ կանուխ ճամբայ կելլեն դէպի Ալպիտան, որ թրքութիւնը ընդունելով վերադառնան Կիւրին, որ 12 ժամ հետաւորութեան վրայ մնացած էր: Կէսօրի մօտերը հասնելով Ալպիտան կը ներկայանան դատարին բոլորը միասին: Դատարը մայր Հեքիմեանը կանչելով յստակօրէն կը հարցնէ. —

— Գատըն, սէն հախ տիմի գապուլ էտիյորսու՞ն: (1):

— Էվէք էֆէնտիմ: (Այո, էֆէնտի):

— Իսմինն ու՞ տիր. (անունդ ի՞նչ է):

— Էլմաս. (էլմաս):

— Էհ, պիգոտ տէ վար էլմաս. Լեյլ սէն շուրասա օքուր, զօնա դուրս գոյուն օլմագ, ֆախար պու ջոնուֆլար էյի իսլամ օլուրլար, էյի ստամ օլուրլար (2):

Կը կանչէ երկրորդը՝ Աստուր Տատուրեան.

— Օղլում սէն հախ տիմի գապուլ էտիյորսու՞ն: (Տղամ դուն ճշմարիտ կրօնը կ'ընդունի՞ս):

— Էվէք էֆէնտիմ: (Այո, էֆէնտի):

— Իսմինն ու՞ տիր. (անունդ ի՞նչ է):

— Աստուր:

— Պուստան սանրա իսմինն իսմայիլ սըր (3), ըսելով կը նստեցնէ:

Կը կանչէ երրորդը՝ Աւետիսը:

— Օղլում սէն հախ տիմի գապուլ էտիյորսու՞ն:

— Էվէք էֆէնտիմ, պատասխանելուն, դայն կ'անուանէ Մէհմէտ:

Կարգը կու դայ 4 զաւակներու տէր դեռատի հարսին.

— Գըզըմ (4), սէնտէ հախ տիմի գապուլ էտիյորսու՞ն:

— Խայր, էֆէնտիմ, խայր (5) կը պատասխանէ Սիրանոյշ:

Դատարը զայրացած կը կանչէ ժանտարման եւ կըսէ.

— Չարուֆ, պու գատընը ջոնուֆլար իլէն պարասպար կէօքիւր սեֆիլար միտիրէ քեօլիմ էք (6):

Բաժնուեցան կրկին մեզմէ Սիրանոյշ ու ձագուկները: Հայ մայրը մնաց իր բարոյական բարձրութեան վրայ:

Ժանտարման կը վերադառնայ կրօնափոխներուն մօտ եւ զանոնք առնելով կ'իյնան ճամբայ դէպի Կիւրին: Ճամբու ընթացքին կը հանդիպին սարսափալիչ տեսարանի մը, — հայ սպաննուած կնոջ մը վրայ կըած երեխայ

1. Տիկին, դուն ճշմարիտ կրօնը կ'ընդունի:

2. Էյ, մեր մէջ ալ կայ իլմաստ անունը. քիչ մը դուն հոն նստէ նայիմէ, ծեր գայը ոչ խար չի կրնար ըլլալ. բայց այս պատիկները լա իսլամներ կ'ըլլան, լա մարդիկ կ'ըլլան:

3. Ասկէ յետոյ անուանի իսմայիլ է:

4. Գըզըմ դուն ալ.....

5. Ո՛չ, էֆէնտիմ, ո՛չ...

6. Շուտ, այս կինը պատիկներուն հետ տարէ եւ արտի վարիչին յանձնեցէ:

մը դեռ մօրը ստինքը կը ծծէր: Ժանտարմաներէն մէկն իսկ շատ յուզուեցաւ, կեցուց իր ձին, փոքրիկը իր մօրմէն բաժնելով գիրկը առաւ, ըսելով.

— Պէն պու չոնուզը կիւրիմէ կեօթիւրիպ էվլլատ եարամազըմ պամա: (Ես այս պզտիկը կիւրին տանելով, դաւակ պիտի ընեմ ինձի):

Շարունակեցինք ճամբան, բայց ոչ մէկս ալ տրամադրութիւն չունէինք: Կը քալէինք կէս մեւած: Ի վերջոյ հասանք կիւրին ողջ առողջ: Ժանտարման նախ պզտիկը թլիհատելու կը տանի, ամէն բանէ առաջ, Իսկ մայր Հեքիմեանը իր ընկերներով կը միանայ դաւակին, Լութֆի Ուստային: Կ'անցնի 8-9 ամիս, կրկին կարաւանին միանալու գրկուածներէն, Սիրանոյշէն եւ պզտիկներէն ոչ մէկ լուր կար: Օր մըն ալ թրքերէնով գրուած երկտող նամակ մը կու դայ, յայտնելով թէ շէքիմ օղլու Փամիլասընն բոլորն ալ մահացած են, միայն փոքրիկ աղջիկը, մօրը անունը կրող Սիրանոյշը մնացած է, հիւանդ, օրերը համրուած վիճակի մէջ:

Արժաստ Ասլան այս նամակը ստանալուն, կը վազէ իրենց մօտիկ դրացի Ահմէտին քով, կրկին կարդալ կու տայ նամակը եւ կ'ըսէ անոր.

— Ահմէտ, ոտքերուդ դուրպան ըլլամ, գնա սա պզտիկը ազատէ, Աստուծայ սիրոյն, ազատէ եւ բեր ինձի տուր:

Ահմէտին երկու տէքերը կը լեցուին, կը ճանչնար բոլորն ալ: Ասլանը տէքէն դրեթէ միասին, նոյն փողոցին վրայ:

— Բայց քու այդ ըսածդ ինչպէ՞ս կրնամ ընել, ստիպուած եմ աշխատիլ իմ ընտանիքս ապրեցնելու համար:

Մայր Հեքիմեան կը վազէ տուն, իր ունեցած ամբողջ հարստութիւնը՝ 20 մէճիտիէ, կը բերէ եւ կու տայ անոր:

— Ասոնք քուկը են, միայն դնա սա միակ միւթարութիւնս եղող չօճուխը վերադարձուր մեզի. միայն ան մնացեր է:

Ահմէտ շատ կը զգացուի. չուզեր մերժել, բայց վտանգաւոր դորձ մըն էր յանձնարարուածը. անհնարին էր շիտակ ճամբաներէ երթալը, ամէն տեղ պահակ կար, կը վախնար բռնուելէ, միայն անտառներէ կրնար անցնիլ: Սակայն կ'որոշէ մեկնիլ:

— Ես այս պզտիկը պիտի ազատեմ, էլմաստ Ասլա, անպարճան զիս հոս կը տեսնես փոքրիկ Սիրանոյշին հետ, ամիս մը յետոյ:

Յաղթելով բազմաթիւ դժուարութիւններ, Ահմէտ կը հասնի Նիզիպ. հոն կը դանէ փոքրիկ աղջիկը վերքերու մէջ խրած: Կարել կու տայ անոր մագերը, Փէս մը կը դնէ գլխուն, ապա մը հաղցնելով կ'ելլեն վերադարձի ճամբան: Աղջկան անունը կը դնէ Մէհմէտ, անակնկալներու չհանդիպելու համար, պզտիկին ալ կը սորվեցնէ որ չյայտնէ ընաւ իր ինքնութիւնը:

34 օր յետոյ, անցնելով անտառներէն եւ անպահակ շրջաններէն, կը հասնին կիւրին: Երբ տունին կը մօտենան Ահմէտ պահուելով անկիւն մը, կը պատուիրէ փոքրիկ Սիրանոյշին, որ ներս մտնէ տունէն: Աղջիկը վախնալով կը յառաջանայ տունին մէկ կողմէն: Էլմաստ Ասլան տեսնելով, որ մուրացկան աղայ մը ուղղակի գէպի տունը կու դայ, կ'ըսէ անոր հեռուէն տաճկերէն բռնելով.

— Տղաս, մի՛ դար, մի՛ դար ներս, եթէ հաց կ'ուզես, տամ...

Բայց Սիրանոյշ առանց մտիկ ընելու միշտ առաջ կ'երթայ:

Էլմաստ Ասլան կը սկսի բարկանալ, ներսէն կը կանչէ.

— Տատուր, շուտ, շան լազուր մը եկեր է, խօսք չի հասկնար, ներս կու դայ կոր, նայի՛ր ո՞վ է եւ ի՞նչ կ'ուզէ:

Տատուրը կը վազէ դուրս, եւ երբ կը մօտենայ մէկէն լեզուն կը կապուի. — էծէ՛, էծէ՛, աչքերը Սիրանոյշին կը նմանին, եկուր տե՛ս...

Մեծ մայրիկը կը վազէ կու դայ ու կը փաթթուի իր սիրասուն ձաղուկին: Ազատուեր էր 4 թունիկներէն մէկը: Քիչ անց Ահմէտն ալ ներս կը մտնէ, այս անգամ աչքերը լեցուած ուրախութենէն: Կատարեր էր լաւ դործ մը: Էլմաստ Ապլան չէր գիտեր ի՞նչ ընել, լա՛ւ թէ ժպտի՛ր...

**

Վերադանուած մանուկը երբ հինգ-վեց տարեկանին կը մօտենայ, իր տարեկիցները իրենց ծնողքէն լսած ըլլալով, որ ան կեա՛վուրի գաւակ է, միշտ կ'անպատուեն զայն: Երբեմն պզտիկը մեծ մօրը մօտենալով կը հարցնէ, թըրքերէն բառերով.

— Ալմաստ Ապլա, ես կեա՛վուրի ձագ եմ:

— Ոչ, զաւակս, ո՛չ, դուն իսլամի ծնունդ, իսլամ ես, կը պատասխանէ մամիկը:

Միշտ այդ անարգանքը կար հայերուն հանդէպ, հակառակ որ քանի մը տուն մնացեր էին, եւ շատերը կրօնափոխ եղած արդէն: Ընդհանուր էր այս պէջ տրամադրութիւնը, անգամ անոնց հանդէպ՝ սրտնք թըքական բանակին ծառայած էին:

Ատեն մը ետք կարգ մը հայ զինուոր-փախտականներ, չդիմանալով այս յարասեւ վիրաւորանքին, կու դային Ալմաստ Ապլային քով պահուելու: Ծեր կիներ չէր դիմանար անոնց ազաջանքներուն, ներս կ'առնէր զանոնք, եղաւ ատեն մը որ անոնց թիւը հասաւ Ձճի: Դժուարաւ կրնար զանոնք կերակրել, երբ կը մնային երկար: Կար նաեւ վտանգը: Եւ իրապէս ալ սօսիկանութեան հրամանատարը կ'իմանայ, որ Ալմաստ Ապլան «զաչախ ասկէր» (փախըստական զինուոր կը պահէ եղեր: Օրին մէկը անակնկալօրէն հինգ ձիաւորներու հետ հրամանատարը կու դայ ստուգելու իրականութիւնը: Երբ կը հասնին Ալմաստ Ապլային մօտ, ան դուրսը նստած բուրդ կը մանէր ու կ'երգէր քթին տակէն: Ուստիկանապետը մօտենալով անոր կ'ըսէ.

— Հէ՛յ, էլմաստ Ապլա, սէն դաչախ ասկէր սախլթօր ումուշումն, պէն իշիքտիւմ, պու սեմին եաքտըզըն տարդո՛ւ մը տըր (1):

Ալմաստ Ապլային աչքերը լեցուեցան, բայց ինքզինքը պահեց, չմտածեց՝ բայց շատ խելացի շարժեցաւ.—

— Էֆէնտիւմ, փաշամ, պէն եախ տիմի դապուլ էքմիշ պիր տուլ դարը ըմ, պէն էսկերը նէ պիլիիւմ, դաչաղը նէ պիլիիւմ, ալ շու ամախտարլարը, կէք իցերի պախ (2):

Այս ըսելով կապոց մը բաժակները կը նետէ ձիուն առջեւ անպախօրէն, ծածկելով իր սրտի արտփիւնները:

Հրամանատարը տեսնելով ծեր կինը հանդարտ կեցուածքն ու արտայայտութեան պարզ ձեւը կ'ըսէ իր հետեւորդներուն.—

1. Հէյ էլմաստ Ապլա, դուն փախտական զինուոր կը պահես եզեր, իմացայ ես, բու այս քրածդ ցի՛շգ է:

2. Էֆէնտիւմ, փաշա, ես ճշմարիտ կրօնը քնդուած այրի կին մըն եմ, ես ոչ զինուորը գիտեմ, ոչ ալ փախտականը, առ տա բաժակները, մտիք մերս եւ ցախիք:

— Հայտե՛, հայտե՛, սափուշուն կէտին, պօռ էվտե՛ մէ ասկեր վար, մէ զաշախ վար(1): Ինքն ալ կը հեռանայ անոնց հետ:

Արմաստ Ապլան, ներս մանկելով իր մօտ թաքնուած հիւրերուն կ'ըսէ. «զաւակներս, այս անգամ ազատեցանք, բայց այս դրութիւնը երկար չի կըրնար մնալ, ամէն զիշեր, պէտք է ձեռք դանկէք փախուստի, եթէ ոչ ուշ կամ կանուխ պիտի դան եւ տանին ձեզ, զիս ալ միասին: Տղաս ալ եթէ տանին, պզտիկները փողոց պիտի մեան: Ողբերգական պիտի դառնայ բոլորիս ալ վե՛ճակը»:

Պահուած տղաքը այդ զիշերէն սկսեալ, կամաց կամաց կը սկսին փախչիլ, տեղափոխուիլ եւ ազատիլ: Իրենք ալ զիտէին, որ արդէն լուրջ էր ստեղծուած իրադրութիւնը, եւ չէին ալ ուզեր Արմաստ Ապլային տունը քանդել, ան կրնար այդ ձեռով օգտակար ըլլալ նաև ուրիշներու:

**

Այս թուականէն քանի մը օր յետոյ, գող-աւազակներ կու գան Արմաստ Ապլային տունը կողոպտելու: Չայնի արնելով ան ներսէն կը սկսի պոսալ, թրքերէն լեզուով.—

— Հէյ, Թորոս, Մարկոս, գող կայ, գող եկեր է, շուտ, շուտ գէնքերը տակք եւ վաղեցէք:

Գողերը այս բացականչութիւնը լսելով, սարսափահար կը ձգեն տունը եւ կ'անհետանան: Այս հարցին մէջ եւս խիստ ճարպիկ դուրս կու գայ Արմաստ Ապլան: Տան մէջ, իրապէս ո՛չ Թորոս, ո՛չ ալ Մարկոս կար:

Մայր Հեքիմենց տունը միշտ ալ ունեցաւ դժուարութիւններ: Գէշ էին իրապէս պայմանները, բայց անոնք կ'աշխատէին դոյատեւել, ջուրին երեսը մնալ: Արմաստ Ապլան կորսնցուց Լութֆի Ուստան, ան մեռաւ քանի մը տարի յետոյ, երկար հիւանդութենէ մը ետք: Սահած էին տարիները, պզտիկ Սիրանոյշը մեծ աղջիկ եղած էր, թուրքերը կ'ուզէին իրենց տղոցմէ մէկուն հետ ամուսնացնել զոյն, իսկ ինքը Արմաստ՝ երկու անգամ բանտարկուած էր, «Էրմէնի տուտը Էրմէրսուն, սէն հայ տիմի դուպուլ էտէն պիր գատըն սրն»(2) ամբաստանութեամբ:

Ամբողջ պարտէզը ձեռքէն առած էին, իրեն ձգելով միայն սենեակ մը եւ մէկ ալ թութի ծառ մը. միշտ տուրք կը պահանջէին իրմէ, առարկելով թէ «քու դաւակներդ այլեւս օտարահայտակ, «էճնէպի թէպասը տըրլար» օտար երկիրներու մէջ: Մինչ այդ արդէն Տատուրը կերպով հասած էր Ամերիկա: Վերջապէս, 1923ին, Արմաստ Ապլան, իր թոռնիկին՝ Սիրանոյշի հետ, կը ձգեն վերջնականապէս կիւրինը եւ բաւական դժուարութիւն յաղթահարելէ ետք կը հասնին Հալէպ: Կը գտնեն իրենցմէ ամուսնած կեանքի ազատութիւնը:

Հալէպէն կ'անցնին Պէյրութ, եւ իր 2 գաւակներուն՝ Լեւոն եւ Յովհաննիսի օդնութեամբ կը հասնին Ամերիկա, Պոսթըն քաղաքը: Արդէն, ժամանակին իր տունը ապաստանած «փախուստական զինուոր»ներէն մէկը՝ Սամուէլ Պիօճիկեան, շատ տառջ եկած ըլլալով Ամերիկա, կը թղթակցէր Արմաստ Ապլային հետ եւ յաճախ նուէրներ ալ կը զրկէր: Հիմա մեռած է Պիօճիկեանը, իսկ մայր Հեքիմեան իր հոգին աւանդեց 1941ին, Նիւ Եորքի մէջ:

1. Հայտե՛, հայտե՛, անցէ՛ք գացէ՛ք, այս տուեմն մէջ ոչ զիմուար, ոչ ալ փախստական կայ:

2. Հայկական ազօրք կ'ընեն դուն. դուն՝ որ նշմարիտ կրօնը ընդունած կին մըն ես:

Տառապալի իրայց հպարտացնող կեանք մը անցուցած էր Արմատ Ապ-
լան: Իր բոլոր պատմութիւններուն եւ յուշերուն մէջ չէր մոռնար չեղտել, որ
կիւրինի հոյակապ Մայր եկեղեցին, Թուրքերը վերածած են բանտարկեալնե-
րու բնակարանի: Այս ալ Թուրք իշխանութիւններու «բաւ» գործերէն մէկն է:
Իայց պատմութիւնը չի ներեր ջարդարարներուն եւ աւերիչներուն:

Լ. ՀԵՔԻՄԵԱՆ

7.— 1915Ի ԱՂԵՏԻ ՇՐՋԱՆԻՆ

Պատմեց՝ ԱԻԵՏԻՍ ՃՂԸԼԵԱՆ

Գրի ստաւ՝ ՍՈՒՐԷՆ Մ. ՎԵՏԻԿԵԱՆ

Աւետիս Վարդան Ճղըլեան (Չուաքեան) ծնած է 1892ին կիւրին: Անոր
հայրը Վարդան Չուլհակ էր եւ կանուխէն մեռած ըլլալով՝ Աւետիս կը ստիպ-
ուի ուրիշներու քով գործաւոր ըլլալ ընտանիքը ասլրեցնելու համար: 1909ին
Աւետիս Ատանա կը գտնուէր երբ տեղի ունեցաւ կիլիկիոյ կոտորածը եւ մեծ
դժուարութեամբ կ'ազատի եւ կը վերադառնայ իր ծննդավայրը:

Նոյն տարին, տակաւին տասնեօթը տարեկան Աւետիս ղինուոր կը կան-
չուի սիւալի մը հետեւանքով: Իրմէ մեծ եղբայր մը մեռած էր նոյն տնունով
եւ հարկ եղած սրբապրութիւնը չէր կրած քաղաքապետութեան տոմարներուն
մէջ: Աւետիս իր մեծ եղբոր տեղը գինուոր կը կանչուէր: Աւետիս եւ իր 60 ըն-
կերները կը սարուին Պալքանները: Կ'անցնին տարիներ, կը բռնկի Պալքանեան
պտտերազմը: Աւետիս կը մասնակցի դանազան կախիներու եւ կը ստանայ յիս-
նապիսի ատտիճան:

Պատերազմի վերջաւորութեան կիւրին վերադարձին Աւետիս կը նշան-
ուի Յակոբ Մառուկեանի աղջկան նրանուհիի հետ: Հազիւ երեք ամսուայ
նշանուած տաաջին համաշխարհային պատերազմը կը ծաղի:

Որպէս ղինուորական ան հրաման կը ստանայ հաւաքել քաղաքին ղին-
ուորական տարիք ունեցող երիտասարդները եւ կառավարչատան տանիլ:
Անոնց կը միանան նաեւ չըջակայ գիւղերէն բերուած ղինուորացուներ: Խումբը
ճամբայ կ'ելլէ դէպի Սերաստիա: Աւետիս իր ղինուորներով կը հասնի Թէճիբ
խանը: Ատիկա այն օրն էր երբ տեղի ունեցաւ Արեւի իսլաւորումը, որ ահ ու
սարսափի մասանկ Թուրքիոյ սնահաւատ ժողովուրդը ամէն տեղ: Անոնք կ'ի-
ջեւանեն պանդուկ մը՝ որուն տէրը հայ էր: Այդ օրը հոն իջեւանած էին նաեւ
Պոլսոյ ղինուորական վարժարանը նոր աւարտած երիտասարդ սպաներ եւ մի
բանի երէց սպաներ, շուրջ 150 հոգի:

Երէց սպաներէն մին երբ կը տեսնէ Աւետիսը չափուչի համադրիստով,
կր կանչէ գինքը եւ կը հարցնէ անունը:

- Մէմէտ, կը պատասխանէ Աւետիս:
- Ո՞ր տեղացի ես:
- Մարաշցի:
- Ո՞ր կ'երթար հիմա:
- Սերաստիա:
- Լաւ, մենք ալ հոն կ'երթանք, կ'ըսէ սպան: Հիմա ինձի նայէ Մէմ-
մէտ, տղա՛ս, մեզի քիչ մը օղի կրնա՞ս գտնել:
- Ինչո՞ւ չէ, կը պատասխանէ ինք: